



ä²i ¶²Ø²i àðàòÀÛ²Û Â°ÎÛ²Î àòÆ²Ø´ÆàÛ

ՄԵՐՈՒԺԱՆ ՍԻՄՈՆՅԱՆ. «Հավարում եմ գալիք խորհրդարանում «Բարգավաճ Հայաստանը» մեծ դերակատարություն կունենա»

Հարցազրույց ՀՀ ԱԺ ընտրությունների N38 ընտրատարածքում «Բարգավաճ Հայաստան» կուսակցության պատասխանատու, ԲՀԿ համամասնական ցուցակով պատգամավորության թեկնածու Մերուժան Սիմոնյանի հետ

– Պարոն Սիմոնյան, մինչև վերջերս անկուսակցական եք եղել եւ ահա անդամագրվել եք ԲՀԿ-ին, որո՞նք են կուսակցության անդամակցելու շարժառիթները, ի՞նչը ձեզ՝ ստաժավոր անկուսակցականի ստիպեց կուստոմն ձեռք բերել:

– Մինչև պատասխանին անցնելը մի փոքրիկ պարզաբանում. խորհրդային բանակում ծառայելիս (1981-83թթ.) ընդունվել եմ կոմկուսի շարքերը, եւ Հայաստանն անկախություն ձեռք բերելուց հետո դուրս եմ մնացել այդ կուսակցությունից ու վերջին քսան տարում ոչ մի կուսակցության չեմ անդամակցել: «Բարգավաճ Հայաստան» կուսակցության անդամակցության խնդրում դեր է խաղացել մտերմությունը կուսակցության նախագահ Գագիկ Ծառուկյանի հետ. նաեւ՝ հետեւելով կուսակցության գործելաոճին, նրա որդեգրած կարգախոսին՝ «Մեր խոսքը գործ է», «Հավատա՛, վատահիր, պահանջիր», ինչը շատ դիպուկ է ընտրված, եւ աստիճանաբար ծանոթանալով կուսակցության կանոնադրությանը՝ համզեցի այդ որոշմանը: Մեզ ուժ ու եռանդ եմ զգում ակտիվ քաղաքականության մեջ մտնելու: Հարգանք եմ տածում կուսակցության նախագահ Գագիկ Ծառուկյանի հանդեպ՝ նրան համարելով պետական եւ քաղաքական հմուտ գործիչ, բարիք արարող եւ բարեգործ անձնավորություն:

– Պարոն ընդգրկված եք կուսակցության համամասնական ցուցակի 30-րդ տեղում, եւ ձեր զբաղեցրած հորիզոնականը համարվում է «անցողիկ», մեծ է ձեր խորհրդարանի անդամ դառնալու հավանականությունը, պատրաստ եք, արդյոք, օրենսդիր աշխատանքով զբաղվելու եւ ո՞ր համընթացումը եք պատկերացնում ձեր գործունեությունը:

– Մասնագիտությամբ տնտեսագետ եմ, կուսակցության նախընտրական ծրագրի բազմաթիվ դրույթներ առնչվում են իմ մասնագիտության հետ, միանշանակ է, եթե կուսակցության քաղաքական գծերը նպատակահարմար գտնի, կընդգրկվեմ այն համընթացումում, որտեղ տնտեսագիտության անհրաժեշտ արդյունքներ են քննարկվում:

– Պարոն երկար տարիներ աշխատել եք հարկային համակարգում, ինչը էր պայմանավորված Ձեր հրաժարականը:

– Որոշումը ինքս եմ կայացրել, ազատվել եմ իմ դիմումի համաձայն, համարելով, որ պետական պաշտոնի զբաղեցմանը եւ քաղաքական կյանք մտնելն անհամատեղելի են, քանի որ, մասնավոր հարկային համակարգում աշխատելու դեպքում, հնարավոր շահարկումների առիթ կարող է ծագել:

– Ի դեպ, երկար տարիներ հարկային ոլորտում եք եղել, նաեւ դեկավար պաշտոն զբաղեցրել, ի՞նչն է պակասում հարկային օրենսդրու-



Մերուժան Սիմոնյան

թյանը, ո՞նք քաղաքականությունից, հատկապես տնտեսվարող սուբյեկտները:

– Նախ՝ կուզեի մեջբերել այն ամենը, ինչն ամրագրված է «Բարգավաճ Հայաստան» կուսակցության նախընտրական ծրագրի հիմնադրույթների մեջ՝ խնդրո առարկայի առնչությամբ: Տնտեսական աճի եւ քաղաքացիների բարեկեցության մակարդակի բարձրացմանը նպաստող արդյունավետ, թափանցիկ եւ արդարացի հարկային համակարգի ձեւավորումը «Բարգավաճ Հայաստանը» համարում է ոչ սոսկ նպատակ, որին անհրաժեշտ է հասնել հնարավորինս արագ, այլ տնտեսության զարգացման այնպիսի միջոց, որը պետք է անուղղակիորեն խթանի մասնավոր ձեռնարկատիրական գործունեությունը: Ըստ կուսակցության որդեգրած քաղաքականության՝ հարկային բեռի բաշխումը պետք է իրականացվի նախաձեռնությամբ բարձր եկամուտներ ունեցողների նկատմամբ առավել մեծ հարկային պարտավորություններ սահմանելու միջոցով, իսկ հարկային եւ մաքսային քաղաքականությունը չպետք է հանդիսանա իրավիճակային խնդիրների լուծման գործիք: Կուսակցությունն անհրաժեշտ է համարում վերափոխվող տրանսպորտի հարկային արտոնությունների դերը, որոնք պետք է նպաստեն տնտեսության զարգացմանը եւ հարկային բազայի ընդլայնմանը, այլ ոչ թե հանգեցնեն բյուջետային եկամուտների անհարկի կորստի: Սիւս այս ամենն է պակասում հարկային օրենսդրու-

թյանը, եւ գուցե այս ամենի բացակայությունն է պատճառը, որ տնտեսվարող սուբյեկտները տրտմում են հարկային կոշտ քաղաքականությունից: Ի դեպ, կուսակցության նախընտրական ծրագրի դրույթներում գերակա խնդիր է համարվում նաեւ ստվերային տնտեսության դեմ կոշտ, սակայն հիմնավորված պայքարը՝ այն համարելով պետական եկամուտների ավելացման էական պայման: Ինչ վերաբերում է խնդրո առարկայի վերաբերյալ իմ նկատառումներին՝ հարկային օրենսդրության մեջ որոշակի փոփոխություններ պետք են, մասնավոր հեռավոր մարզերում եւ մայրաքաղաքում ապրող տնտեսվարող սուբյեկտներին նույնացնելը եւ նրանց նկատմամբ նույն սկզբունքներ կիրառելը սխալ եմ համարել: Հարկային բնագավառում աշխատելու տարիներին բոլոր տնտեսվարող սուբյեկտներին ձգտել եմ գիտակցել տալ, որ ամենամիսեւի մարդիկ չպիտի լինեն, բոլորը հավասար են հարկային դաշտում:

– Նորից դառնանք ընտրություններին: Կապանում ո՞նք եք համառոտ լուրեր են շրջանառում այն մասին, թե իբր դուք ձեր քաղաքական գործունեության ընթացքում ուղղորդվում եք մարզի հայտնի դեմքերի կողմից: Ի՞նչ կասեք այդ մասին:

– Տարիներ շարունակ իմ գործունեությունը եղել է բոլորի տեսադաշտում: Սյունիքի մարզում եւ Կապանում ինձ շատ լավ ճանաչում են, եւ կարծում եմ՝ իմ գործունեության ընթացքում երբեք թույլ չեմ տվել մի այնպիսի արարք, որ նման կասկածների տեղիք տա: Իմ վա-

րած պաշտոններում եւ առաջնորդվել եմ գործող օրենքներով եւ խղճի մտքով: Դա մի չարախոսություն է, որ իմ ելույթներում ու անվանը չի կաշույն: Մարդկային արժանիքներից առավել կարեւորել եմ ինքնասիրությունը եւ որեւէ մեկի թելադրանքով չեմ առաջնորդվել:

– Հանրապետական կուսակցությունը «Բարգավաճ Հայաստանի» կոալիցիոն գործընկերն է, երկու գործընկեր կուսակցություններ առանձին-առանձին են մասնակցում ընտրություններին: Դա որոշակի սրություն չի՞ առաջացնի նրանց հարաբերություններում:

– Ես կարծում եմ, որ պիտի լինի առողջ ընդհանրություն: Ստավախություն չունեն ինչ-որ մեկից, ինչ-որ բանից: Այսպիսի դիպուկ մի խոսք կա. «Եթե ուզում եք չվախենալ ոչնչից, հիշեք, որ վախենալ կարելի է գրեթե ամեն ինչից»: Չէի ցանկանա, որ ամեն մի միջադեպ քաղաքականացվի եւ կապվի առաջիկա ընտրությունների հետ: Բնականոն կյանք է, առանց ընտրությունների էլ ինչ-որ խնդիր ծագում է, ինչ-որ բանում լինում է, եւ ես ու իմ թիմը պատրաստ ենք մրցակցության:

– N38 ընտրատարածքում ԲՀԿ-ին օժանդակող որոշ մարդիկ կարող են մտադախտություն ունենալ, որ նրանց նկատմամբ ճնշումներ կարող են լինել՝ աշխատանքից ազատում եւ այլն: Ոչ այնքան բարձր մակարդակներում էլ նման շռուկներ են տարածվում:

– Չեմ կարծում, որ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության հանդեպ կլինեն ճնշումներ: Իսկ

եթե սթափ մտածենք, ահաբեկելու մեթոդը մարդկանց մեջ հակառակ արդյունքն է տալիս: Նաեւ կյանքով հաստատված մի ճշմարտություն կա. «Այն մարդիկ, ովքեր ցանկանում են վախ ներշնչել, դրանով իսկ ցույց են տալիս, որ իրենք վախկոտ են»: Ես նման գործելաոճը համարում եմ թուլություն ու չեմ կարծում, որ մեր մարզում ինչ-որ մեկն այդքան թույլ կզուցվի: Ընտրություններից հետո մեզ միջոց յուրաքանչյուրը պետք է կարողանա եւ պետք է պատասխան տա իր արարքների համար:

– Այս հարցը ես միշտ տալիս եմ պատգամավորության թեկնածուներին. ինչպե՞ս եք գնահատում հանրապետության ներքաղաքական իրավիճակը:

– Որոշ լարվածություն նկատելի է, ինչը միշտ հատուկ է եղել նախընտրական շրջանին, որն աններելի է: Մասնակց տեղեկանում ենք, որ ընտրական հողի վրա արդեն բախումներ են եղել, օրինակ, Արմավիրի եւ Շիրակի մարզերում: Շատ կուզեմ, որ ներքաղաքական լարված մթնոլորտը լիցքաթափվի, թող այն գիտակցությունն իշխի, որ ընտրությունների ժամանակ հաղթողներ եւ պարտվողներ չեն լինում: Չլինի այնպես, որ մեկն օգտագործի իր դիրքն ու պաշտոնը՝ դիմացինի վրա ներազդելու համար: Բայց որոշ մարդիկ իրենց անհարկի ոգեւորությամբ թույլ են տալիս սխալներ, որ շատ վատ են ընդունում: Մասնավոր փոքր բնակավայրերում, որտեղ համարյա բոլորն իրար ճանաչում են, պիտի բացառվեն նման երեւույթները, քանզի բարեկամական, մտերմական, պաշտոնական կապերով բոլորը կապված են իրար հետ: Պիտի այնպիսի առողջ միկրոմիջավայր ստեղծենք, որ յուրաքանչյուր ընտրող խղճի մտքը եւ սրտի թելադրանքով կատարի իր քվեարկությունը:

– Եվ ո՞րն է ներքաղաքական լարված իրավիճակից դուրս գալու ելքը:

– Յուրաքանչյուրը պետք է գիտակցի, որ ընտրություններն անցողիկ են, իսկ մարդկային հարաբերությունները՝ հավերժական: Յուրաքանչյուրն իր մեջ պիտի վերափոխվի մասնավորի իր արարքները, ճի՞շտ է գործել, թե՛ սխալ:

– Նախընտրական շրջանում ճանաչարարություն մի կուսակցությունից մի այլ կուսակցություն անցնելու դեպքեր են գրանցվել եւ գրանցվում: Ձեր կուսակցությունից արտահոսք նկատվո՞ւմ է դեպի այլ կուսակցություններ:

– Կասե՛ի՛ ընդհակառակը, այս օրերին կուսակցության տեղական կառույցի շարքերը ստվարանալու միտում ունեն: Կապանում մարդիկ, հիմնականում երիտասարդներ, դիմում են «Բարգավաճ Հայաստան» կուսակցության անդամագրվելու խնդրանքով: Բայց կուսակցությունը որդեգրել է մի սկզբունք. քարոզարշավի այս օրերին ընդունելություն չկազմակերպել, դիմումներն ընդունել զի գիտությունն է փորձաքաղաք անցնելուց հետո ընդունել կուսակցության մեջ:

– «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը՝ համընդհանուր նախագահ Գագիկ Ծառուկյանի, հանրապետությունում հայտնի է բարեգործական նախաձեռնություններով, բայց այս վերջին չորս տարում ԲՀԿ-ն իրեն համեմատաբար հեռու է պահել Սյունիքից ու Կապանից:

– Ես հարցը կնեկնաբանեի Կապանի օրինակով: Ազգային ժողովի նախորդ ընտրություններում ԲՀԿ-ի Կապանի կառույցն ուներ 1850 կուսանդամ, կուսակցությունը մարզկենտրոնում ունեցել է 1230 քվե, այսինքն նույնիսկ ԲՀԿ-ականների մեծ մասը չի քվեարկել հարազատ կուսակցության օգտին, դա, շարունակությունը՝ էջ 7

ԾԶԹԶԹԶԵՍՂԻ ԶՍ ԱՍԻ ԾԶԻ ԶԾՂ

Սյունեցիները՝ ՀՀԿ նախընտրական ցուցակում

Ըստ տեղերի հաջորդականության



ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀՀ Ընդգերիկայի և բնական պաշարների նախարար
Ցուցակի 45-րդ տեղ



ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

Սյունիքի մարզպետ
Ցուցակի 60-րդ տեղ



ԲԱՐՍԵՂՅԱՆ ԷԴԻԿ

Արարաբի մարզպետ
Ցուցակի 63-րդ տեղ



ՔԱՐԱՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ
Ցուցակի 84-րդ տեղ



ԱՐՏՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ, «Հայոց արծիվներ» ՀԿ-ի նախագահ
Ցուցակի 85-րդ տեղ



ՎԱՐԴԱՆՅԱՆ ՇԱԿԻԿ

«Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ տնօրեն
Ցուցակի 121-րդ տեղ



ՍԱՐԳՍՅԱՆ ՌՈՒԴՈՆՑ

«Դավիթբեկյան ուխտեր» երիտասարդական ՀԿ-ի նախագահ, Սյունիքի մարզպետարանի աշխատակից
Ցուցակի 140-րդ տեղ



ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀԱՅԿ

Պատգամավորության թեկնածու թիվ 37 մեծամասնական ընտրատարածքում
Ցուցակի 185-րդ տեղ



ՀԱԿՈՔՅԱՆ ՎԱՅԵ

Պատգամավորության թեկնածու թիվ 38 մեծամասնական ընտրատարածքում
Ցուցակի 187-րդ տեղ



ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԱՍՈՒՆ

«Որոտանի հեկերի համալիր» ՓԲԸ տնօրեն
Ցուցակի 203-րդ տեղ



ՆԵՐՍԻՍՅԱՆ ՆԱԻՐԱ

Սիսիանի N3 ավագ դպրոցի տնօրեն
Ցուցակի 249-րդ տեղ

Լուրեր

ԲՀԿ համամասնական ցուցակի 20-րդ հորիզոնականը զբաղեցնող Տիգրան Ուրիխանյանը նշանակվել է Գորիսի տարածաշրջանում ԲՀԿ կենտրոնական շտաբի համակարգող: Ավելի վաղ ԲՀԿ-ի գորիսյան կառույցի ղեկավար, ԱԺ պատգամավոր Վաչագան Խուրշուդյանը ինքնամեկուսացվել է նախընտրական շտաբի ղեկավարումից, ինչի պատճառներին կանդիդատները լրացուցիչ:

Ապրիլի 7-ին Սիսիանի հոսպիտալում մահացել է ժամկետային զինծառայող Հայկ Ղազարյանը: ՊՆ լրատվական ծառայության աշխատակից Մուշեղ Աղեկյանը NEWS.am-ի թղթակցի հետ զրույցում նշել է, որ Ղազարյանը զորակոչվել էր Վաղարշապատի զինկոմիսարիատից և ծառայում էր Գորիսի զորամասում: Հայտնի է դարձել նաև, որ զինվորի ինքնազգացողությունը վատացել է այդ օրը ժամը 14.00-ի սահմաններում, ինչից հետո տեղափոխել են Սիսիանի հոսպիտալ: Ավելի ուշ փորձել են տեղափոխել Երեւան, սակայն ժամը 21.00-ի սահմաններում մահացել է: Ըստ շրջանառվող վարկածներից մեկի՝ Հայկ Ղազարյանը մահացել է մեծահասակ հիվանդությունից:

2012 թվականը Գորիսում հայտարարվել է գիշերային լուսավորության ցանցի բարելավման տարի, և քաղաքապետարանն այդ հարցը համարել է ընթացիկ տարվա կապիտալ նորոգումների գերակա ուղղություններից մեկը: Ներկայումս քաղաքում կա 420 լուսակետ, ինչը, սակայն, բավարար չէ: Հատկապես չեն լուսավորվում ծայրամասային փողոցներն ու թաղամասերը: Մարտ ամսին մեկնարկած ծրագիրը կավարտվի մայիսին: Ծրագիրը ֆինանսավորվում է համայնքային բյուջեից և «Ձանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ-ի միջոցներով:

Գորիս քաղաքում սոցիալական բնակարանների կառուցման ծրագիրը մեկնարկել է 2005-ին: Գյունրիից հետո Գորիսը երկրորդ քաղաքն է, որտեղ Շվեյցարական գրասենյակի ու Հայաստանի կառավարության համագործակցությամբ իրականացվում է բնակարանների կառուցում: Ներկայումս ավարտին է մոտենում «Սոցիալական տուն» աջակից պայմանների առկայությամբ Գորիս-2» ծրագիրը: Օրերս Գորիսի քաղաքապետարանում տեղի ունեցած խորհրդակցությունում քննարկվեցին ծրագրի ավարտին առնչվող հարցեր:

Ամեն տարի մարտ-ապրիլին ամբողջ աշխարհում անցկացվում են ֆրանսախոսության օրեր, որի նպատակն է խրախուսել ֆրանսախոսությունը: Միջոցառմանը միջոց էլ ակտիվ մասնակցություն է ունենում Հայաստանը, որը ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության անդամ է: Մարտի 15-ից ապրիլի 15-ն անցկացվող միջոցառմանը մասնակցություն է ունենում նաև Գորիս քաղաքը: «Գորիսի ֆրանսախոսության կենտրոն» ՀԿ-ն, ինչպես և Գորիսի քաղաքապետարանն անց են կացնում կրթամշակութային բազմաթիվ միջոցառումներ: Մասնավորապես՝ համայնքի դպրոցներում հայտարարվել է շաբաթը մեկ ֆրանսախոսության օրերի մրցույթ՝ հայ-ֆրանսիական թեմայով: Տոնը Գորիսում կեղափակվի համաքաղաքային միջոցառմամբ:

Սյունյաց երկիր

Տ Ա Ս Ն Օ Ր Տ Ա Թ Ե Ր Թ

Գլխավոր խմբագիր՝ ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 06 28 02:

Էլ. փոստ՝ syuniacyer.kir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyer.kir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶՐ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնուն տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Սյունյաց երկիր» պարտադիր է:

© նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 2200, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 12.04.2012թ.:

Ծառահատում Գորիսի զբոսայգում եւ հուղախոռոկ քննարկումներ դրա շուրջ

Ձանգվածային ծառահատում, թե՞ գերհատում, չոր եւ փտած ծառերի հեռացում նոր ծառեր տնկելու նպատակով

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ապրիլի 7-ին «Այունյաց երկիր» ահազանգ ստացավ Գորիսից այն մասին (օրվա ընթացքում զանգերը շարունակվում էին), թե քաղաքի «բուլվարում», համայնքային իշխանության որոշմամբ, 15 ծառ են կտրել: Մեր ստեղծագործական խումբը մի քանի ժամ անց եղավ տեղում եւ կատարվող աշխատանքները լուսանկարեց (լուսանկարներից մեկը ներկայացնում ենք ստորև): Զբոսայգում հավաքված տարեց գորիսեցիների վեճի թեման էլ իրենց աչքի առաջ իրականացվող ծառահատումներն էին: Ոմանք քննադատորեն ու կասկածանքով էին վերաբերվում քաղաքապետարանի այդ ձեռնարկումին, մյուսները դրանք համարում էին սանիտարական հատումներ եւ կարելիքը տեղում նոր ծառեր տնկելը:

Զբոսայգում հանդիպեցինք Գորիսի քաղաքապետ Նելսոն Ոսկանյանին, ում հետ եւ փորձեցինք ճշտել, թե ինչ հիմնավորմամբ են կատարվում հատումները: Նա մասնավորապես ասաց. «Այս օրերին՝ գարնանը բնորոշ որոշակի աշխատանք ենք կատարում քաղաքի բարեկարգման-կանաչապատման ուղղությամբ: Աշխատանքներ ենք կատարում կենտրոնական զբոսայգում նույնպես: Կատարում ենք հիվանդ եւ գերհատում ծառերի հատում, ինչից հետո պետք է տնկենք նոր ծառեր: Տեղեկացնեմ նաեւ, որ այս հարցի վերաբերյալ կա ավագանու որոշում, որի համար հիմք է ծառայել բնապահպանության մասնագետների առաջարկը: Կա նաեւ 33 բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական տեսչության Սյունիքի տարածքային բաժնի համաձայնությունն ու մասնագիտական գնահատականը: Դրանք 60-70 տարվա ծառեր են, որոնք չեն համապատասխանում կանաչապատման նորմատիվներին: Հատված ծառերը փտած էին, մի մասի կեղեղը հիվանդ էր, որոշ ծառեր չորացել էին կամ արդեն չորանում էին ու փրկել հնարավոր չէր: Դեռ այս գարնանը հատված ծառերի տեղում նոր ծառեր կտնկենք: Բացի այդ՝ քիմիկատի կտնկենք եւ զբոսայգում, եւ կենտրոնական փողոցների կամուրջ գոտիներում: Նման աշխատանք ենք կատարել ամեն տարի: Եվ 1.3 մլն դրամ տարեկան հատկացնում ենք «Գորիստնտ» ՓԲԸ-ին՝ կանաչապատման եւ կանաչ պարածքների խնամքը կազմակերպելու համար: Վերջին 7-8 տարում քաղաքի տարբեր վայրերում տարեկան 800-1000 ծառ ենք տնկել, թեեւ դրանց մի մասը փչացել է կամ գողացել են: Քաղաքում եւս 25-30 ծառ կա, որ նույն պատճառով կհատենք: Ծառերի հատման կամ էտի արդյունքում ստացված փայտը, իբրեւ վառելիքայտ, հատկացնում ենք համայնքային կազմակերպություններին, որոնք ծնունդ վառելիքի կարիք են ունենում: Եվ ուզում են հավատացնել գորիսեցիներին, որ կատարվող աշխատանքներն անհրաժեշտ են ու պետք չէ կասկածանքով վերաբերվել բարեկարգման ուղղությամբ կատարվող աշխատանքներին: Իհարկե, հասկանում են նաեւ քաղաքի բնակիչների մտահոգությունը: Զբոսայգին գորիսեցիների սիրված վայրերից է, եւ մարդիկ



7 ապրիլի 2012թ., Գորիսի կենտրոնական զբոսայգում:



Նելսոն Ոսկանյան, Գորիսի քաղաքապետ

ուզում են այն տեսնել առավել կանաչապատ ու բարեկարգ վիճակում, ինչի մեջ ծառեր ենք նաեւ մենք»:

Քաղաքապետի ուղեկցությամբ մենք դիտարկեցինք հատված կամ արմատախիլ արված ծառերը, բայց կատարվածի օրինակության եւ անհրաժեշտության մեջ համոզվելու համար կանեցանք իմանալ նաեւ 33 բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական տեսչության Սյունիքի տարածքային բաժնի պետի կարծիքը: Եվ ահա թե ինչ ասաց Լեւոն Պետրոսյանը. «Զբոսայգին, զբոսայգու ծառերը համայնքային սեփականություն են եւ դրանց ճակատագիրը որոշելու իրավունքը, բնականաբար, Գորիսի համայնքային իշխանությանն է: Բայց քաղաքապետը դիմել է նաեւ մեզ՝ մասնագիտական կարծիք ստանալու ակնկալիքով: Մասնագետների հետ ես եղել եմ այնտեղ, ուսումնասիրել բոլոր ծառերի վիճակը: Մի խոսքով՝ մասնագետները հավանություն են տվել այդ ծառերը հատելու առաջարկին: Իրականում դրանք տարիքն առած, գերհատումն առած, չոր եւ փտած, բնամասը ներսից կերված ծառեր էին՝ գլխավոր հատման ենթակա: Միաժամանակ՝ քաղաքապետը հավաստիացրել է, որ տեղում ընթացիկ գարնանը



Լեւոն Պետրոսյան, 33 բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական տեսչության Սյունիքի տարածքային բաժնի պետ

նոր ծառեր կտնկվեն, հավանաբար՝ եղենի տեսակի ծառեր, որն ավելի ցանկալի է տվյալ տեղանքում: Այնտեղ, կարծում եմ, բարձր ծառերը նույնպես պետք է փոխարինել տեղանքին համապատասխանող ծառերով, քանի որ ուժեղ քամիների արդյունքում (իսկ ուժեղ քամիներ Գորիսում հաճախակի են լինում) այդ ծառերը կարող են ընկել եւ մարդկանց կամ մեքենայի ենթակառուցվածքներին վնաս պատճառել»:

Ինչպես տեսնում եք՝ Գորիսի զբոսայգու 15 ծառի հատումը կատարվել է քաղաքապետարանի որոշմամբ եւ բնապահպանական տեսչության համաձայնությամբ: Նրանց կարծիքները, ըստ էության, լիովին համընկնում են: Մենք, իհարկե, չենք ուզում մասնագիտական այդ կարծիքները վիճարկել, քննարկել ծառերը հատելու նպատակահարմարությունը: Բայց ուզում ենք ընդգծել Նելսոն Ոսկանյանի հավաստիացումը, որ հատված ծառերի տեղում առաջիկա օրերին կտնկվեն նոր ծառեր: Այդ հավաստիացման արդյունքը, փաստորեն, պետք է երեւա մոտակա մեկ-երկու ամսում: Դեռ այդ ժամանակ էլ մարդկանց տարակույսները կվերանան: Իսկ թե

ինչու գորիսեցիները կասկածանքով են մայում քաղաքապետարանի այդ ձեռնարկումին, ինչու այդ միջոցառման խորքում ուրիշ ենթատեսք են մարդիկ տեսնում, դա արդեն խոսակցության այլ թեմա է...

ԱՍՏՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

3.9. Գորիսում առանձնահատուկ վերաբերմամբ կա այդ զբոսայգու հանդեպ: Հատկապես տարեցների մոտ կան նաեւ հետաքրքիր հուշեր: 1949թ. հենց այդ զբոսայգում էր բացվել բացօթյա պարահրապարակը, որը դարձել էր երիտասարդության հանգստի ամենահետաքրքիր վայրը: Պատշաճ խնամք կար նաեւ զբոսայգու բարդիների հանդեպ: 1955թ. զբոսայգու երկու ծառի հատումը դարձել է հանրապետության կուսակցական ամենաբարձր ատյանի քննարկման առարկա: «Սովետական Հայաստան» թերթում՝ Արամ Սարգսյանը (ծագումով՝ Խնածախից) տպագրել էր մի հոդված՝ «Բարդիների բարեկամը» վերտառությամբ: Հոդվածագիրը մեղադրանք է հնչեցրել Գորիսի շրջափակի գործկոմի նախագահ Արմենակ Մայսուրյանի հասցեին, ում թույլտվությամբ զբոսայգում հատել էին երկու բարդի՝ այնտեղ էլ ցանցի ենթակայան կառուցելու համար: Հոդվածը ՀԿ(Բ)Պ կենտկոմում մարտի 28-ին քննարկելուց հետո շրջափակի գործկոմի նախագահը պաշտոնաճակ է արվել: Անշուշտ, այդ դեպքի եւ մերօրյա ծառահատումների միջեւ զուգահեռ անցկացնելու միտում չունենք: Ուզում ենք պարզապես հիշեցնել, որ զբոսայգու ծառերը տարիներ շարունակ հանրապետության հոգածության են արժանացել: Եվ ամեն մի ուսմնագրություն այդ ծառերի հանդեպ՝ ընդունվում է ոչ միանշանակ: Ի դեպ, որոշմամբ կլինեն ման հարցերում նախապես գրուցել համայնքի բնակչության հետ՝ հանրային քննարկում կոչվածի պես մի բան կազմակերպելով, եւ մարդկանց բացատրել, թե ինչու է անհրաժեշտ տվյալ քայլը:

Մալիկ Թելունցը հրաժարական կրա, եթե...

ՔԱՐԱՔԱԿԱՆ ՈՍՍԱՆՏԻՉՍ

N37 մեծամասնական ընտրատարածքում թեկնածուների գրանցումից մեկ-երկու օր հետո Մալիկ Թելունցն ինքնաբացարկի դիմում ներկայացրեց ընտրատարածքային ընտրական հանձնաժողով: Սակայն մի քանի օր անց նա չիավաստեց ինքնաբացարկի իր ցանկությունը եւ շարունակեց մնալ թեկնածուների շարքում: Այդ բոլորով հանդերձ, մինչդեռ, Գորիսում եւ Միսիանում համառոտեմ շրջանառվում են լուրեր՝ նրա նոր եւ անվերադարձ հրաժարականի մասին:

— Որքանով է հավաստի Ձեր հրաժարականի մասին շրջանառվող խոսակցությունը, — հարցրեցինք Մալիկ Թելունցին:

— Տեղյակ եմ այդ խոսակցությանը, — ասաց պատգամավորության թեկնածուն: — Ասում են նաեւ, թե ինձ ահաբեկել են... Բայց այդ խոսակցություններն իրականությանը չեն համապատասխանում: Իշխանություններն էլ, կարծում եմ, ինձանից դժգոհելու հիմք չունեն: Իսկ եթե կա դժգոհություն, ապա դա մեկ անգամ արդեն արտահայտվել է, երբ 2008թ. Գորիսի պետական համալսարանում ամբիոնի վարիչի պաշտոնից ինձ ազատեցին անհիմն կերպով: Իհարկե, ՀՀԿ-ն մախընտրական շրջանում որդեգրել է մի գիծ, որ շատերիս մոտ առանձնապես խանդավառություն է չի առաջացնում, բայց չեմ հավատում, որ դա նոր կոնֆլիկտի պատճառ կարող է դառնալ: ...ես հետագայում թեկնածությունս հանելու հաշվարկով չեմ, որ ինքնառաջադրվել եմ: Բայց մնան հարց կարող է առաջանալ, եթե ընտրողների հետ հանդիպումից պարզվի, որ նախընտրվել է ընտրողը չի ընկալում այսօրվա վիճակի վտանգավորությունը, դուրս չի գալիս ապաստիսի վիճակից, ըստ պատշաճի չի արձագանքում իմ կոչերին, առաջարկություններին ու նախաձեռնություններին: Ամեն ինչ կախված է ընտրողների աջակցության աստիճանից:

— Ընտրող ասվածը շատ բազմիմաստ, բազմաբնույթ, բազմաշերտ հասկացություն է: Ո՞ւմ եք համարում Ձեր ընտրողը, սոցիալ-քաղաքական հեմարկում այս ընտրապայքարում:

— Բոլոր նրանք, ովքեր կողմ են արմատական, համակարգային փոփոխությունների, ովքեր դեմ են քրեաօլիգարխիկ համակարգին՝ ես համարում եմ իմ պոտենցիալ ընտրողը: Եվ մնան մարդիկ հանրության մեջ զգալի տոկոս են կազմում: Մեկ այլ հարց է, թե որքանով այդ մարդիկ կկարողանան ազատ, անկաշկանդ արտահայտել իրենց կամքը:

— Արդյո՞ք դա նշանակում է, որ Դուք այնքան էլ չեք հավատում արդար ընտրությունների գաղափարին:

— Քանի դեռ երկրում իրական, արմատական, համակարգային փոփոխություններ չեն կատարվել՝ ես լուրջ վերապահություններ ունեմ: Այս իրավիճակում իրականացվող ամեն մի ընտրություն նախաձեռնաճանաչում է երկրի աղետալի վիճակի հետագա օրինակաճանաչում, նշանակում է քրեաօլիգարխիկ հիդրայի իշխանության վերադարձություն՝ մեր իսկ ձեռքով: Եվ դա այն է, որի մագիլները խրված են ժողովրդի տկար մարմնի մեջ:



Ի ձեռք է առնվում

ՄԻ ԲԱՆԻ ՓՈՍՏ

ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկյանը Կապանի քաղաքապետ Արտուր Աթաբեկյանի հրավերով 2009թ. հուլիսի 27-ին այցելեց Կապան: Օրանակա- կայանում նրան դիմավորեցին Սյու- նիքի մարզպետ Սուրեն Խաչատրյա- նը, Կապանի քաղաքապետ Արտուր Աթաբեկյանը, ԲՀԿ Կապանի, Քաջարանի, Մեղրի-Ազարակի, Սիսիանի, Գորիսի տարածքային խորհուրդների նախա- գահները եւ անդամները: Այնուհետեւ մարզպետի ուղեկցությամբ եղավ Սյունիքի մարզպետարանում: Սուրեն Խաչատրյանը Գագիկ Ծառուկյանին պարզեցատրեց «Ալսեյ Բակունց» հու- շանդակով: ԲՀԿ առաջնորդն այնու- հետեւ այցելեց Կապանի քաղաքա- պետարան, որից հետո՝ Բաղարուրջի հուշահամալիր եւ պսակներ դրեց զոհված ազատամարտիկների շիրիմ- ներին: Անտառաշատ համայնքում բնակիչները ոգևորությամբ դիմա- վորեցին ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծա- ռուկյանին: Այդ համայնքին նվիրվեց գյուղտեխնիկա: Այնուհետեւ Կապանի մշակույթի կենտրոնում նա հանդիպեց քաղաքի հասարակայնության ներկա- յացուցիչների հետ:



ԲՀԿ-ն Կապանում, Մեղրիում եւ Քաջարանում

- Ամեն տարի (անցած հինգ տարում) գիտելիքի օրվա կապակցությամբ «Գագիկ Ծառուկյան» բարեգործա- կան հիմնադրամն առաջին դասարա- նի աշակերտներին նվիրել է պայու- սակ եւ գրենական պիտույքներ:
Նոր տարվա նախաշեմին (հինգ տարի շարունակ) «Գագիկ Ծառուկյան» բա- րեգործական հիմնադրամը երեխա- ներին անակնկալ է մատուցել՝ Չմեռ պապի ու Չյունանուշը նրանց բաժա- նել են ամանորի ավանդական նվեր- ներ:
«Գագիկ Ծառուկյան» բարեգործա- կան հիմնադրամը 2007թ. մարտի 8-ին հինգ եւ ավելի երեխա ունեցող բազմազավակ մայրերին նվերներ եւ ծաղիկներ է նվիրել:
2010թ. հոկտեմբերին «Գագիկ Ծառու- կյան» բարեգործական հիմնադրամը ցորենի եւ կարտոֆիլի սերմացու է բաժանել շրջանի գյուղական հա- մայնքներին, այդ թվում՝ 6.5 տոննա աշնանացան ցորենի, 4 տոննա՝ կար- տոֆիլի սերմացու: Գյուղացիներին 30 տոննա աշնան ցորենի սերմացուի օգնություն է ցույց տրվել նաեւ 2006թ. սեպտեմբերի 21-ին:
«Գագիկ Ծառուկյան» բարեգործա- կան հիմնադրամը 2007թ. սեպտեմբե- րի 29-ին ութ լավագույն մանկավարժի դրամական պարգևի է արժանացրել:
«Գագիկ Ծառուկյան» բարեգործա- կան հիմնադրամը 2007թ. մարտի 8-ին 50 կարիքավոր եւ միայնակ թո- շակառուի հատկացրել է մեկական պարկ այլուր /50 կգ/:
«Գագիկ Ծառուկյան» բարեգործա- կան հիմնադրամը 2010թ. ապրիլին հիմնադրուցել է «Կապանի բժշկա- կան կենտրոն» ՓԲԸ-ի հինգ հիվան- դասենյակ:
Գագիկ Ծառուկյանը 2009թ. հուլիսի 27-ին Անտառաշատ համայնքին նվի- րել է գյուղտեխնիկա:
«Գագիկ Ծառուկյան» բարեգործա- կան հիմնադրամը Հայրենական մեծ պատերազմի վետերաններին ցույց է տվել դրամական օգնություն եւ հանձ- նել հորեյանական կոնյակ (ամեն տարի՝ անցած հինգ տարում):
Գագիկ Ծառուկյանի աջակցությամբ

- Կապանի շրջանի 80 երիտասարդ այցելեցին ԼՂՀ պատմամշակութային վայրեր:
«Գագիկ Ծառուկյան» բարեգործա- կան հիմնադրամը հինգ տարի շա- րունակ (տարեկան երկու անգամ) «Երեւոնի» բժշկական կենտրոնի բարձրակարգ մասնագետների մի- ջոցով անվճար բուժօգնություն կատարեց համայնքների հիվանդա- նոցներում: Միայն 2011թ. Կապա- նի շրջանում անվճար վիրահատվել է 116 հոգի, 780 հոգի ստուգվել եւ ստացել է օպտիկական ակնոց: Հա- մանման ակցիաներ են իրականաց- վել նաեւ Մեղրիում, Ազարակում եւ Քաջարանում:
«Գագիկ Ծառուկյան» բարեգործա- կան հիմնադրամը 5 մլն դրամ է հատ- կացրել ԲՀԿ Կապանի նոր գրասենյա- կը հիմնադրուցելու համար:
«Գագիկ Ծառուկյան» բարեգործա- կան հիմնադրամը Կապանի մի շարք թաղամասերում տեղադրելու նպա- տակով Կապանի քաղաքապետարա- նին հատկացրել է 75 մանկական կա- րուսել:
«Գագիկ Ծառուկյան» բարեգործա- կան հիմնադրամը կապանցի լավա- գույն ուսանողներից երկուսին շնոր- հել է անվանական կրթաթոշակ եւ յուրաքանչյուր տարի (անցած հինգ տարում) վճարել ԲՀԿ անդամ կան համակիր կապանցի կարիքավոր ու- սանողների կիսամյակային վարձավ- ճարը:
Կանանց տոնի՝ Մարտի 8-ի կապակ- ցությամբ «Գագիկ Ծառուկյան» բա- րեգործական հիմնադրամն ամեն տարի ծաղիկներ է բաժանում գեղե- ցիկ սեռի ներկայացուցիչներին:
ԲՀԿ Կապանի երիտասարդական խորհրդի անդամները 2012թ. մարտի 8-ին այցելեցին «Արծվանիկի առող- ջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲ ընկերություն ու նվեր- ներ բաժանեցին կենտրոնի բնակիչ- ներին:
Գագիկ Ծառուկյանը 2009թ. հուլի- սի 27-ին Կապան քաղաքին նվիրեց աղբատար մեքենա, բժշկական սար- քավորումներ եւ դեղորայք, մարզա-

- դպրոցին՝ մարզագույք:
2009թ. Քաջարան գյուղի բնակիչնե- րը նախաձեռնեցին գյուղի Սբ Հակոբե եկեղեցու վերանորոգումը: Այդ նպա- տակով սկսված դրամահավաքին 4 մլն դրամով մասնակցեց ԲՀԿ առաջ- նորդ Գագիկ Ծառուկյանը:
Վերջին հինգ տարում՝ ամեն Նոր տարվա առիթով ամանորի նվեր է ու- դարկվել քաջարանցի 500 մանուկնե- րի:
Քաջարան քաղաքի «Մանկապա- տանական մարզադպրոց» ՊՈԱԿ-ին 2010թ. նվիրվել է ընթացմարտի գորգ՝ 7 հազար ԱՄՆ դոլար արժողությամբ, բռնցքամարտի տանձիկ՝ 1 մլն դրամ արժողությամբ, եւ այլ մարզագույք:
Վերջին հինգ տարում պարբերաբար վճարվել է քաջարանցի 10 ուսանողի ուսման վարձ:
Քաջարանցի հինգ երիտասարդ 2011թ. տասն օր հանգստացել են Ծաղկածորում:
Քաջարան քաղաքի եւ մերձակա գյու- ղերի դպրոցներին ու դպրոցականնե- րին տրվել է գույք եւ գրենական պի- տույքներ:
2011թ. Կարճեւանում մեկնարկել է մարզադաշտի եւ կից հանգստի գո- լույն կառուցումը, որը կավարտվի առաջիկա երկու ամսում: Նախագծա- յին արժեքը՝ 5 մլն դրամ է, վճարումը կատարում է «Գագիկ Ծառուկյան» բարեգործական հիմնադրամը:
2010-11 ուսումնական տարում Ռո- զա Ծառուկյանի հովանավորությամբ Ազարակ-Կարճեւան երթուղով մշտա- պես աշխատել է ավտոբուս՝ աշա- կերտներին եւ ուսուցիչներին փոխա- դրելու համար:
Լիճք եւ Տաշտուն գյուղերում 2010- 11թթ. Ռոզա Ծառուկյանը գյուղացի- ներին հատկացրել է 3 տոննա կար- տոֆիլի, 4 տոննա հացահատիկի սերմացու:
Վերջին հինգ տարում ավելի է զարգացել ու ընդլայնվել դեռեւս 1996թ. Կարճեւանի համայնքի տա- րածքում ստեղծված մեղվաբուծա- կան տնտեսությունը, որտեղ ներկա- յումն աշխատում է տասը մարդ:

Նա այն քչերից է, ով վաստակել է ժողովրդի սերը

ԳՆԱՀԱՏԱՆՔ

ԱՆԵՔՍԱՆՈՐ ՄԵԼՈՆՅԱՆ

Անհաղ Ժեռներեց, Կապան

Հարգանք վայելող մարդ- կանց մասին միշտ էլ հաճելի է խոսել: Մերուժան Սիմոնյանն իր կենսագրությամբ ստեղծել է բարեխիղճ մարդու կերպար: Կարծում եմ՝ ԲՀԿ-ն ճիշտ ընտ- րություն է կատարել, որովհե- տեւ հենց Ս.Սիմոնյանը կկա- րողանա հավուր պատշաճի ներկայացնել մեր մարդի հիմնախնդիրներն Ազգային ժողովում: Երբ նա աշխատում էր հարկային տեսչությունում, շատերին է աջակցել, դժվար իրավիճակներում հայտնված մարդկանց օգնության ձեռք մեկնել: Երբ էլ, այսօր մեր հա- սարակությունը թերահավա- տորեն է վերաբերում ընտրու- թյուններին եւ առաջադրված թեկնածուների ու կուսակցու- թյունների խոստումներին, բայց, վստահ եմ, որ Մերու- ժան Սիմոնյանն այն թեկնա- ծուն է, ուն այսօր վստահում ու հավատում են շատերը:

ԱՐՄԵՆԱԿ ԲԵԳՎՈՐՅԱՆ

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության Կապանի տարածքային բաժնի պետ

Մերուժան Սիմոնյանի խոսքն ու գործը միշտ իրար համընկել են: Նա, քաղաքա- կան դաշտ մտնելով, կարծում եմ, Կապանի շրջանում բազ- մաթիվ հարցերի լուծում կտա: Նախորդ ընտրություններին ԲՀԿ-ի հավաքած 1546 ծայրը վկայում է Կապանի տարա- ծառայանում կուսակցության գործունեության որոշ թերա- ցունների մասին: Առաջիկա ընտրություններին, ինչպես տեսնում եք, շատերն են սա- տարում ԲՀԿ-ին, եւ, կարծում եմ, դրանով մենք դրական արդյունքի կհասնենք, որում մեծ դերակատարում կունենա Մերուժան Սիմոնյանը: Սյու- նեցիներից շատերը ոգևոր- վածությամբ են ընդունել նրա մուտքը ԲՀԿ եւ պատրաստա- կանամություն են հայտնել կանգնել նրա կողքին: Կար- ծում եմ՝ Մերուժան Սիմոնյա- նը հայտնվել է ճիշտ վայրում եւ ճիշտ ժամանակին: Միայն նա կարող է Ազգային ժողո- վում ցույց տալ, որ Սյունիքն էլ ունի արժանի ու ուժեղ կամքի տեր զավակներ, ով- քեր կարող են նպաստել Հա- յաստանի Հանրապետության բարգավաճմանը:

ՍՈՒՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԲՀԿ-ի Կապանի տարածքային կառույցի քարտուղար

ԲՀԿ-ի Կապանի տարած- քային կառույցը գտավ իր

թեկնածուին: Շատ մեծ ոգևոր- ություն ապրեցի՝ լսելով Մե- րուժան Սիմոնյանի՝ ԲՀԿ հա- մանամական ցուցակում ընդգրկվելու մասին: Ճանա- չողները համամիտ կլինեն, որ նա Կապանում մեծ հարգանք է վայելում, տիրապետում է ժողովրդի հետ համագոր- ժակցելու ձեռքին: Հաջողու- թյան հասնելու դեպքում, ինչն ամխուսակի է, նա ցույց կտա Կապանի տարածաշրջանին, թե ինչպիսին պետք է լինի Ազգային ժողովի պատգամա- վորը: Աշխատելով հարկային տեսչությունում՝ շփվել է բազ- մաթիվ մարդկանց հետ, լսել նրանց հուզող խնդիրները եւ փորձել իր հնարավորությու- ների սահմաններում լուծում տալ առաջ քաշված հարցե- րին: Նա այնքան սիրված է հասարակության կողմից, որ այսօր շատերը, լսելով նրա անունը, անդամակցում են ԲՀԿ-ին ու պատրաստակա- մություն հայտնում՝ սատարել եւ աջակցել նրան: Կարծում եմ՝ հաջողության հասնելու դեպքում Ս.Սիմոնյանը խոս- քով ու գործով ապացուցելու է, որ կանգնած է սյունեցու կողքին: Կարծում եմ նաեւ՝ առաջիկա ընտրություններին ընտրողների մեծամասնու- թյունը կանգնելու է մեր եւ մեր նախընտրած թեկնածուի կողքին՝ ապացուցելով, որ հավատում է Ս.Սիմոնյանին եւ մեր կարգախոսին՝ «Մեր խոսքը գործ է»:

ԿԱՍՈ ԱԲՐԱՎԱՄՅԱՆ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության Կապանի տարածաշրջանային կառույցի նախագահ

Կապանում Մերուժան Սիմոնյանին գրեթե բոլորն են ճանաչում: Գիտեն, թե ինչ արժանիքների, ինչ կարող- ությունների տեր անձնա- վորություն է: Նա բազմիցս է կապանցիներին ապացուցել, որ իր խոսքը գործ է, ինչպես այսօր ասում է ԲՀԿ-ն: Եթե անկեղծ լինեմ, Ս.Սիմոնյա- նը մեծամասնականով առա- ջադրվելու դեպքում ավելի շատ ծայն կհավաքեր: Եթե մեր տարածաշրջանում նա- խորդ ընտրություններին ԲՀԿ-ն հավաքել էր 1546 ծայն, ապա այս ընտրություն- քանակապատկվելու է՝ շնորհիվ Ս.Սիմոնյանի: Մենք մեր թի- մով նրա կողքին ենք, փոր- ծում ենք ամեն հարցում աջակցել ու սատար կանգնել նրան: Ս.Սիմոնյանը, աշխա- տելով հարկային տեսչությու- նում, լավ պատկերացնում է, թե ինչ չլուծված հարցեր կան մարզում, եւ համոզված եմ, որ ընտրվելու դեպքում շատ կարճ ժամանակահատվա- ծում կփորձի դրանց լուծում տալ: Մեզ եւ Ս.Սիմոնյանին հաջողություն են ցանկանում եւ հույսով սպասում, որ մայի- սի 6-ի ընտրություններին կու- սակցությունն առաջատար- ներից մեկն է լինելու նաեւ Սյունիքում ու մասնավորա- պես Կապանում:

Պատրաստեց ՋՄՐԻՆԵ ՀԱՍԲՈՒԶՈՒՄՅԱՆԸ